# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 998 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 7-րդ կետի N 1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Աղյուսակ N 1. Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը, անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ**

| **Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող մասնագետներ** | | **Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ** |
|---|---|---|
| 1. Օրթոպեդ<br>2. Վնասվածքաբան<br>3. Ակնաբույժ<br>4. Սրտաբան<br>5. Քիթ-կոկորդ-ականջաբան<br>6. Նյարդավիրաբույժ<br>7. Հոգեբույժ<br>8. Էնդոկրինոլոգ<br>9. Վիրաբույժ<br>10. Նյարդաբան<br>11. Թերապևտ<br>12. Արյունաբան<br>13. Աղեստամոքսաբան<br>14. Նեֆրոլոգ/երիկամաբան<br>15. Ուռուցքաբան<br>16. Մաշկաբան<br>17. Ռևմատոլոգ<br>18. Ուռոլոգ<br>19. Թոքաբան<br>20. Ֆտիզիատր<br>21. Ընտանեկան բժիշկ | 22. Մանկաբույժ<br>23. Մանկական օրթոպեդ-վնասվածքաբան<br>24. Մանկական ակնաբույժ<br>25. Մանկական սրտաբան<br>26. Մանկական նյարդաբան<br>27. Մանկական քիթ- կոկորդ-ականջաբան<br>28. Մանկական նյարդավիրաբույժ<br>29. Մանկական հոգեբույժ<br>30. Մանկական ներզատաբան<br>31. Մանկական վիրաբույժ | 1. Հոգեբան<br>2. Կինեզոլոգ<br>3. Էրգոթերապիստ<br>4. Լոգոպեդ<br>5. Տիֆլոմանկավարժ<br>6. Սուրդոմանկավարժ<br>7. Օլիգոֆրենոմանկավարժ<br>8. Սոցիալական մանկավարժ<br>9. Մանկական հոգեբան<br>10. Հատուկ մանկավարժ<br>11. Վերականգնողաբան<br>12. Մանկական վերականգնողաբան<br>13. Ֆիզիոթերապևտ |

».

2) որոշման հավելվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ ենթակետերով.

«3) անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց ցանկությամբ դիմելու դեպքում.

4) ծառայությունների անհատական ծրագիր կազմելու դեպքում, եթե հաշմանդամություն ունեցող անձն այն երբևէ չի ստացել:».

3) որոշման հավելվածի 15-րդ կետի 2-րդ ենթակետը «բողոքարկելու» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) կատարելու» բառերով, իսկ 3-րդ ենթակետը «հայտնաբերվելու» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների անհատական ծրագրում ներառված միջոցառումների վերանայման» բառերով.

4) որոշման հավելվածի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Անձի ֆունկցիոնալության գնահատման համար դիմումը կարող է ներկայացվել առցանց կամ առձեռն ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:».

5) որոշման հավելվածի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Ծառայության տարածքային կենտրոնը դիմումը և էլեկտրոնային համակարգում բացակայող փաստաթղթերն առձեռն ստանալու դեպքում՝ այն մուտքագրում է էլեկտրոնային համակարգ ներկայացնելու պահին: Եթե դիմումատուն չի ներկայացրել ինքնագնահատման հարցաշարը, ապա առձեռն ստանալու դեպքում դիմումը ներկայացնելու պահին դիմումատուի հետ համատեղ այն մուտքագրում է էլեկտրոնային համակարգ:».

6) որոշման հավելվածի 32.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

7) որոշման հավելվածի 42-րդ կետից հանել «տասնվեց նիշանոց» բառերը.

8) որոշման հավելվածի 50.2-րդ կետում «առցանց, փոստով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն ծառայություն կամ» բառերը փոխարինել «առցանց կամ առձեռն» բառերով, նույն կետի 5-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) մահվան մասին բժշկական վկայական:».

9) որոշման հավելվածի 75-րդ կետի 2-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

«3) դիմելու պահին մետաստազների առկայությամբ:».

10) որոշման հավելվածի 76-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) արհեստական կայուն բացվածքների առկայություն (Z93).» .

11) որոշման հավելվածի 76-րդ կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովան-դակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) կոկորդի բացակայություն Z90.0:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ